ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԿԱՋՄԱԿԵՐՊՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՎԵԲԻՆԱՐՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ԱՐԱԳ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼ



COVID-19 ԵՎ ՎԻՏԱՄԻՆ D

Վեբինարը տեղի է ունեցել Առողջապահության ազգային ինստիտուտի, Հայկական բժշկական միջազգային կոմիտեի և Սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակի համագործակցության շրջանակներում:

Թեմայի շուրջ զրույցը վարեց պրոֆեսոր Ջոն Բիլեկիկյանը ԱՄՆ-ից և Վարտա Բաբալյանը Հայաստանից: Վեբինարին ավելի քան հարյուր բուժաշխատող է մասնակցել:

COVID-19 ԴՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Դասընթացն այն կազմակերպությունների բուժաշխատողների համար է, որոնք հիվանդանոցային պայմաններում բուժօգնություն են ցուցաբերում COVID-19 դրական հիվանդներին:

Դասընթացն անցկացրին Հայաստանի ոստիկանության բժշկական վարչության հոսպիտալի վերակենդանացման բաժանմունքի ղեկավար Գայանե Հովհաննիսյանը և ՀՀ ԱՆ ընտանեկան բժշկության գծով խորհրդատու Սամվել Հայրումյանը:

ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ COVID-19 ԴՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ

Դասընթացների շարքը թերապևտների և ընտանեկան բժիշկների համար է:

Դասընթացը վարում է ՀՀ ԱՆ ընտանեկան բժշկության գծով խորհրդատու Սամվել Հայրումյանը: Դասընթացին մասնակցել է ավելի քան 150 բուժաշխատող:

! ՀԻՇԵՑՆԵՆՔ, ՈՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԿՐՈՒՄ ԵՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ

12 ՆՈՅԵՄԲԵՐԻ
ԹՈՔԱԲՈՐԲԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ ՅՈՒՆԻՍԵՖԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ԹՈՔԱԲՈՐԲԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ և ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳԼՈԲԱԼ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ՝ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ՆՎԱԶԵՑՆԵԼ ԹՈՔԱԲՈՐԲԵՐԻՑ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ:

Աշխարհում տարեկան
450 միլիոն
մարդ հիվանդանում է թոքաբորբով, որից
7 միլիոնը
մահանում է:
Մինչև 5 տարեկան երեխաների մոտ մահվան դեպքերը կազմում են ավելի քան
1,4 միլիոն



Ներկայումս ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում, կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված՝ համաճարակային իրավիճակը շարունակում է մնալ լարված: Հանրության ուշադրության կենտրոնում է այն մտահոգությունը, թե ինչպես խուսափել նոր վիրուսից և վերջինով պայմանավորված թոքաբորբից: Սակայն, միևնույն ժամանակ, ամբողջ աշխարհում շարունակում են արձանագրվել նաև պատվաստումների միջոցով կանխարգելվող հիվանդություններ, այդ թվում՝ թոքաբորբեր, որոնք կարծես մոռացության են մատնվել, այն դեպքում, երբ կանխարգելման լավագույն և արդյունավետ միջոցը՝ պատվաստումները, հասանելի են և կիրառվում են արդեն տասնյակ տարիներ:

Այս համատեքստում ուշագրավ է այն փաստը, որ թոքաբորբերի պատճառագիտության մեջ պնևմակոկին բաժին ընկնող դեպքերը կազմում են մեծահասակների շրջանում գրեթե 72%, իսկ մինչև 5 տարեկան երեխաների շրջանում՝ 88-89%:

Նշենք, որ պնևմակոկային վարակի, ինչպես նաև սեզոնային գրիպի, կապույտ հպի, հեմոֆիլուսային B տիպի վարակի, կարմրուկի, կարմրախտի, մենինգակոկային վարակի դեմ պատվաստումները ներառված են ՀՀ Պատվաստումների ազգային օրացույցում և հասանելի են բնակչության նպատակային խմբերի համար:

Առողջապահության նախարարությունում կայացել է գործակարգավարական խորհրդակցություն՝ ԱՆ ենթակայության բժշկական կազմակերպությունների տնօրենների, ԱՆ առանձնացված ու կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ:

Արսեն Թորոսյան. «ՊԱՏՇԱՃ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՋԵՎ ԴՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ»

Առողջապահության նախարար Ա. Թորոսյանը խոսել է պատերազմական գործողությունների հետևանքով վիրավոր զինծառայողների բուժման գործընթացի, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված առկա իրավիճակի և անելիքների վերաբերյալ:

Նախարարն անձնակազմին, հատկապես հիվանդանոցների տնօրեններին, հորդորել է պատշաճ շարունակել առողջապահական համակարգի առջև դրված աշխատանքները, մարտահրավերների դեմ պայքարը և լինել առավելագույնս հետևողական այս իրավիճակում բուժօգնության կարիք ունեցողներին աջակցելու համար:

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հոկտեմբերի **14-ի** դրությամբ

1472 ՆՈՐ ԴԵՊՔ | **41** ՆՈՐ ՄԱՀ | **115855** ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

460606 ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ | **39564** ԲՈՒԺՎՈՂ ԱՆՁ

74105 ԱՊԱՔԻՆՎԱԾ ԱՆՁ | **1738** ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՀԵՐԻ ԹԻՎԸ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 060 83 83 00 -24/7

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան**, **Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**